

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԻԳՈՐ ՍԱՐԻ

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлиς, Редакция «Мелік».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տ է լ է Գ Օ Ն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ ուրիշ օրերէն).

Յայտարարությունը ընդունվում է ամեն շաբաթով.

Յայտարարությունների համար վճարում են

իրաւաբանի կողմէն տարածուողին 10 կոպեկ.

Տ է լ է Գ Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ՍԱՐԻՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակոսեայ զրոյց. Մատենադրութիւն. Նամակ Աստուածային. Նա- լակ խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐ- ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ԼՈՒՐԵՐ. Մանրանկար. — ՀԵՌԱՔԻՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Խաղաղութիւն.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱՆՈՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Ես ամաչելով էի կարդում «Թերուս կնոջ խոստովանութիւնը», որ տպւոյց «Մշակի» մէջ առ- ցաւ չարախօս:

Ամաչում էի, սաստիկ ամաչում. Ամօթը եր- րանքն ամբողջ շնորհում էր ինձ, որ ես վրդով- ւում էի, չէի իմանում, թէ ինչու համար են չարա- քին այս բանը եւ ինչու համար են տպել Այս, րօպէներ կային, երբ ես պատրաստ էի տպել «Հրաշալիք և անգիտութիւնը». րօպէներ էին դրանք, երբ ես, տանջված ու ճնշված, կը խաղաղօրէն տեսնէի կեանքը ոչ թէ իր մերկու- թեան, այլ քրոջարկիւմ, աղօտ, աննշմարելի դրաման:

Յաւեր կան, որոնք չափազանց անգութ կեր- քով են ծաղկոտում սիրտը. Ես աշխատում էի պատկերի այդ գրուածքի թողած տպաւորու- թիւնը. Ես ուզում էի ինձանից հեռու քել այն մտքերը, որոնք ընկալանաբար, իբրեւ պարզ հետեւանք, դուրս էին գալիս իմ առջեւ դրած պատկերներէն:

Բայց իզուր. Իզուր ես պատճառներ ու ա- ռիթմեր էի որոնում. Իզուր ուզում էի հա- ւատալ, որ օգի այն խեղդող ծանրութիւնը, որ այդ միջոցին ինձ տանջում էր, Թիֆլիսի 40 տարեկան տաղից է. Ասում էի այդպէս, կրկնում էի, բայց տեսնում էի, որ խաղաղ եմ ինձ. Գոյալ աւելի համոզել, աւելի ծանրակշիւ հանգամանք Մի տիկին նկարագրել է մի երե- ւոյթ. Բայց ոչ է երաշխաւորը, որ դա բոլոր- լիքով մի մասնաւոր երեւոյթ չէ, մի ոչ եւ է բոլորի, աւանի կամ գիւղի անկիւնում տեղի ունեցած մի անցք կամ անցքեր:

Ինչ բան է պատահում կեանքի մէջ, ասում է ինքս ինձ մի խրախուսել, սիրտ տուող չեղ- անք. Աւելի վատերը գիտեմ մենք. Կինը՝ ոճ- րագործ, կինը՝ անկաման ծայրահեղ աստիճանին

հասած. Եւ ոչ, չընելով փողոցներում եւ տես- նելով հարկաւոր կանանց, կասէ թէ ամենքն են ոճագործ, ամենքի բարոյականութիւնն է արատաւորված. Աւելի լաւ է նայեմ այդ խոս- տովանութիւն, իբրեւ անհատական, մասնաւոր ե- րեւոյթի վրա. Լաւ է, այո, անպայման կեր- պով լաւ է. Գոնէ այդպէս նայելով, մենք չենք ճնշվի սարսափելի ծանրութեան տակ, չենք զգայ մեր չորքը մի գերեզմանային դատար- կութիւն, մի խորխորատ, որ պատրաստ է կլա- նել մեզ...

Ես ուզում էի մանրացնել, անչափ մանրաց- նել պատմված երեւոյթը. դարձնել նրան մի աննշան մեծութիւն, մի հիւլէ, որպէս զի նա հետաքրքրութիւն ներկայացնէ իբրեւ մէկը այն հազարաւոր հիւանդոտ կողմերի, որ կեանքը տալիս է ամեն օր, դարմանք պատճառելով, բայց վերջնականապէս չը յուսահատեցնելով:

Երկար ես աշխատեցի այս ուղղութեամբ. Բայց, պէտք է խոստովանեմ, ինձ չաղողեց... Ամեն ինչ ցոյց էր տալիս, որ դուրս ունեմ իրականութեան հետ. Իմ ձգտման դէմ բողո- յում էր անարեւետ, միաժամ, պարզ պատ- մուածք. Ես տեսնում էի նրա մէջ վաւերա- կան փաստեր, որոնք ջախջախել չէ կարելի ոչ լաւատեսութեամբ, ոչ բարի ցանկութեամբ. Փշուր էր կեանքի հզօր շունչը, երեսն ի վայր շուն տալով ամեն մի պատճառաբանութիւն, ճնշված հոգու ամեն մի դիմադրութիւն:

Եւ ես հասկացայ, որ դա ճշմարտութիւն է. Վաւերացրի. Այո, դժբախտաբար Գոնէ կարող էք ասել, որ նա կարգված է ոչ որոշովին ան- թիւի, դուք կարող էք գտնել նրա մէջ արեւեա- տի, հետոյ թեան թուրութիւն, նոյն իսկ բա- ցակայութիւն. Բայց չէք կարող չընդունել. որ նա շատ պերճաւոր է, որ նա հնարված չէ, որ երեւակայութիւն այդտեղ չէ երեւում, այլ մի անհաւոր ճշմարտութիւն է, որ եթէ չէ բայց ա- նում իրան ամբողջովին, դոնէ իր ներկայու- թիւնն է ցոյց տալիս:

Ճշմարտութիւն... Շատ դառն ճշմարտու- թիւններ գիտեմք մեր կեանքից, բայց այսքան խեղդող, այսքան յուսահատական ճշմարտու- թիւն երեւակայութիւն էք, ընթերցող:

Մի կին խոստովանում է ձեր առաջ. Եւ դուք, ի հարկէ, չէք մոռանում, որ այդ կինն ունի իր անունը—«Թերուս» Այո, չը պէտք է մոռանալ կրկնեմք եւ հազար անգամ կրկնեմք, որ թերուս կնոջ պատմութիւնն է դա թերուս...

Դա ոչ տգէտ, հին հասկացողութիւնների ստորակ կինն է, ոչ կանոնաւոր կրթվածը, զար- զացածը. Մեր ժողովուրդը շատ է սիրում կրկ- նել թերուսական առածը. «Ծառայ եմ հասկա- ցողին էլ, չը հասկացողին էլ, բայց հատույ կի- րատի ձեռքից» Այսպիսի մի կիւստ, այսպիսի մի թերին է մեզ խոստովանում. Զը մոռանա՞նք այս:

Թող չը վրդովվի իսկապէս զարգացած, կրթված հայ կինը, կարգավոր մեր գրուածքը. Զի վրդովվի այս խօսքերից եւ անգրագէտ, հին, խաւար հայ կինը, որ երբեք չէ էլ կարդում, չը գիտէ թէ ինչ ենք մենք գրում. Խօսքը թե- րուսների մասին է, ուրեմն Պարզ լինե՞ք, որ թերուսացողութիւնների տեղիք չը տանք:

Բայց միթէ թարմեք արդեօք, որ այսպիսի խոստովանութիւններ հայ կանանց մի որոշ մասից, մի որոշ դասակարգից ենք լսում:

Ոչ, չը միթէ թարմեք. Իսկապէս կրթված, զարգացած հայ կանայք. Բայց ըսնի հատ են նրանք. քանի՞սը կարող ենք մասնների վրա համ- րել. Ինչ են այդպիսիները, ընթերցող, սարսա- փելի քիչ. Վերջէք այնուհետեւ բոլորովին տգէտներն. Սրանք, ճիշդ է, անագին բազմու- թիւն են կազմում. Բայց միթէ մենք կարող ենք պարծնեալ այդ անագին բազմութեամբ. Ի՞նչ տգիտութիւն մի աղէտ է, մի անհաւոր անէժք է. Ամեն տեղ աշխատում են գրագի- տութիւն տարածել, հանել խաւարի գերիներին գէպի լոյս. Մենք էլ աշխատում ենք. Բայց անհաւոր դժբաղդութիւնը. տգիտութեան թա- զաւորութիւնից դուրս են գալիս թերուսներ. Ժամանակը մեզ առաջ է մղում. Տգիտութիւնը զգում է, որ իր համար մահ է գալիս եւ գէպի լոսաւորութիւն է դիմում, բայց թերուսների շարքերն է ստուարացնում. Մի մեծ հոսանք տգիտութիւնից գէպի թերուսութիւն. Նա չէ դադարում, չէ ընդհատվում...

Ահա ինչու չը պիտի միմիջարկեմք. Խօսելով թերուս կնոջ մասին, մենք պէտք է նկատի առնենք, որ դա սովորական, առօրեայ, տա- րածված հայ կինն է. Դատեցե՛ք ինքներդ. Տը- դիտութիւնից ոչինչ յոյս ունենալ չենք կարող, իսկական զարգացածներին մասնորոշ կարելի է համարել ի՞նչ է մնում մէջ տեղը—Թերուսը. նա է փոքր ի շատ գրագէտը, նա է հետա- քրքրվում ժամանակով. նրան կարելի է տեսնել տանից դուրս եկած, նա է բազմութիւն կազ- մում:

Լինել

Այսպէս թէ այնպէս, ցաւելով պիտի ասել, որ այդ նկարները շատ քիչ են երեւում վարդ. սրտառեալ, պայծառ օր եւ շատ լաւ հայկի է հարկաւոր լաւ տեսնելու համար. Այլ է Վեր- ջին դատաստանը, որ բռնել է ամբողջ ճակա- տի պատը եւ ուշադիր աչքը եկեղեցու կիսա- խաւարի եւ փոշու մէջ անգամ կարող է տես- նել Միքէլ-Անջելօն բոլորովին ծեղձ վաթսուս եօթ տարեկան էր, երբ սկսեց այդ գործը եւ նրա վրա աշխատեց ամբողջ ութ տարի. Զը նայելով իր մեծ տարիքին՝ Միքէլ-Անջելօն կա- րողացաւ տալ իր ամենամեծ գործը եւ հան- ճարեղ երեւակայութիւնը գործեց երիտասար- ճական հակա թիֆլիզով:

Ժամանակը եւ մի քանի դարերի լինելի ծու- խը մի անթ շղարչ են ձգել այս զարմանալի գործի վրա, բայց այսպիսով պատկերի ստացել է աւելի խորհրդաւոր տեսք. Միքէլ-Անջելօն զարմանալի արուեստով դրել է պատի վրա այն, ինչ որ հանձնարեց Դանտէն իր խաղական երազ- ների մէջ տեսել եւ իր գերբնական, վաւեր յայտ- նութիւնների մէջ նկարագրել է. Աստուածային վրէժիկներութեան եւ մահականացողների գերա- գոյն սարսափի օրն է այս Միքիլայն կրօնական հաւատը իր բոլոր խորութեամբ անկարող պիտի լինէր արտադրել զեղարուեստական մի այսպի- սի խիզախ գործ. Միքէլ-Անջելօն ծեղ հանձնար, ակնաւորեա իր հայրենիքի թշուառութիւններին, իրար բաղվալով չըկամութիւններին, նենգու- թիւններին, ստորութիւններին, սիրտը լի ցա- սուածով եւ ցաւով նրանց դէմ, որոնք թշուա-

Բայց ինչ է նա այս րօպէին—Մի դատարկ արարած, մի խեղճութիւն, մի դժբաղդութիւն. Մի հարաւորութիւն մի անմիտ խաղ, մի սպորտ դարձրած ճիւղակեր, նա, ի հարկէ, չի կանգ առնի ուրիշ սրբութիւնների առաջ. դուարճու- թեան, ժամանակ անց կացնելու համար նոյն- պիսի թեթեւամտութեամբ սպորտ կը դարձնէ ազգասիրութիւնն էլ, Շէքսպիրն էլ, քերական- նութիւնն էլ. Եւ հօ տեսնում էք. նա անում է այդ. Անում է չը խղճահարկելով, անում է չը հասկանալով. նա իրաւունք ունի, թերուսի իրաւունք...

Երկար, շատ երկար եմ ես մտածել այն դժ- րադէ հանգամանքի վրա, որ հասարակական ասպարէզներում հայ կանայք չեն երեւում. Գրականութիւն կայ մեզանում, զարոյց, թա- րօն կայ, աղքատներ ու արտասուածներ կան. Հարկաւոր են մարդիկ, գործիչներ ենք կան- չում. Եւ քանի անգամ ես հարց տուած կը լինեմ—Ո՞ր է հայ կինը...

Ես էլ—չատերի պէս—սիրել եմ հաւատալ թէ կը լինեն նրանք, կերեւան մեր կանայք հա- տարակաց օգտի, հասարակաց փրկութեան դաշ- տում. Միքիլ եմ սպասել, հասկանալով նոյն իսկ, որ չափից դուրս երկար ենք պատում, բայց մի եւ նոյն ժամանակ ասելով, որ երկար սպասելը ոչինչ է, որ կը լինեն, կը գան նրանք, որ ժամանակը պատրաստում է նրանց...

Այժմ լինչպէս սպասել... Պատրաստվում են, այսինքն Բայց ինչքան եւս պատրաստվում. Սարսա- փելի է մտածելն անգամ—դատարկ հողմարած- ներ, կանաչ-կարմիր ծոթերի մէջ փախված տիկնիկներ. Նրանք կը կործանեն մեզ. Զէ կա- րող հասարակութիւն տառջանալ առանց կնոջ. Փշերի եւ տատաղների այն հայրենիքում, որ աշխարհ է կոչվում, մի ազգ չէ կարող երբեք բախտաւոր լինել, եթէ նրա մէջ առաջադիմու- թեան ճանապարհի վրա թափվող սուրբ քրտին- քը հաւատար չափով չէ ծլում եւ կնոջ ճակա- տից:

Ո՞ր է նա, այդ քրտինքը:

Մենք այն ենք տնկել, մենք սպասում ենք, օրեր ենք միջնացնում, միշտ «վաղը, վաղը» կանչելով. Միաժամանակ ենք եղել...

Վաղը, վաղը. Բայց որտեղից պիտի գայ, լինչպէս պիտի գայ այդ վաղը. Ո՞վ պիտի պատ- րաստէ նրան. Մեր թերուսները:

Թերուսների պատրաստածը կայ արդէն, ա- ռատ է, համայնատարած եւ այլքան խոր, որ

նուրթանների ծովի մէջ խեղդեցին XVI դարի պատառ պատառ իտալիան, կարծես կամեցել է պատկերացնել իր փայփայած վրէժիկներին օրը, երբ մի փրկիչ կը գայ իր հայրենիքի թշնամիների եւ դաւաճանների դատը տեսնելու եւ արժանի պատիժ տալու:

Դանտէն իր գծովի սարսափների մէջ տես- ւում իր եւ իր հայրենիքի թշնամիներից շատ շատերին *), ինչու չենթադրել, որ այս կի- րախաւարի մէջ լողացող պատկերներից շատե- րը ներկայացնում են Անջելօն ծանօթ եւ ա- տելի այս կամ այն անհատականութիւնը, որի չարագործութիւնները իսկապէս վիրաւորել են նրա մեծ հոգին:

Եւ արդարեւ, լոկ կրօնական էկստազը, հո- զեւոր խոհերն ու պատկերները, սատանանե- րով ու կարի կարասներով սնված միտքի եւ րեւակայութիւնը երեւէ չը պիտի կարողանա- յին այդ աստիճան իրական, հոգեբանօրէն այդ- քան ճիշտ կենսատու երեւոյթները պատկե- րացնել, մարդկային կրքերի, յոյզերի, ցնցու- ճների այս ժխտը արձանացնել հմայիչ եւ ահա- ւոր վեհութեամբ. Այս համայնատարար փոքրիկ պատի վրա իրար խառնված մարմինները ասես թիւ չունեն եւ մի զարմանալի կատակիչով հանդիպած՝ ամեն մէկն աշխատում է փրկել իր

*) «Ո՞վ եւս դուր գալիս ես տարածում. Դանտէն, Նիլէ գալիս եմ, չեմ մնալ, բայց դու ո՞վ ես, որ այդ- քան տգեղացել ես. Տեսնում եմ, մէկն եմ նրանցից, որոնք լալիս են. Դանտէն. Սրբունքների, սուղի մէջ կայ եւ մնա, ո՞վ անկեղալ դու հոգի, թէ եւ բոլորովին ցեխոտ եմ, բայց քեզ ճանաչում եմ (Դանտէն, Գծովի VII-ը երգ):

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Ուղեւորի թուղթիկ տպաւորութիւններ)

XXIV

Անցեալ անգամ գրեցի Միքէլ-Անջելօի «Մով- ւելի մասին» նրա քանդակագործութեան վրա մի զարմար տարւո համար. Մեծ արուեստա- ղէտի դէմքն աւելի ընդհանր դարձնելու համար, այժմ կը խօսեմ նրա մի պատկերի՝ Վերջին դատաստանի մասին, որ ոչ պակաս հիաց- անք եւ զարմանք է շարժում, իբրեւ մի գե- րարուեստական չեղեօքով:

Վատիկանի միւզէին կից մի փոքրիկ մատուռ կայ՝ Սեքստինի մատուռ անունով, (chappelle Sextine), որ 1473 թւին չինեց Սիքստին IV իւլ XVI-րդ դարում Միքէլ-Անջելօն զարգարեց իր զարմանալի արմատկարներով. Այստեղ է նրա «Վերջին ստեղծագործութիւնը»՝ նկարված 1508—1512-ին եւ «Վերջին դատաստանը» 1534—1541-ին. Իմ այցելած օրը բազմութիւնն անգին է. մատուռը բառի բուն նշանակու- թեամբ լիքն է օտարազգիներով. փոշու ամպը պատել է թիթիւրաբ եւ առանց այն էլ կիսա- ղարձառով էլ աւելի մտայլ է. Բոլոր այցելու- տերը վերեւ են նայում, որովհետեւ Միքէլ-Ան- յելօն իր անմահ գործերը նկարել է առանտաղի

նրա մէջ հնչողութեամբ կարող են խեղդել ամբողջ սերունդներ։ Ուզում էք տեսնել թէ ինչ արեցին թերուսները Կարգացէք նրանց խոստովանութիւնը։ Մտէք շտապութեան, զեղ- խութեան տաճարները—այնտեղ է հայ կինը։ Գտէք խնթաբար փող շատ տալու միջոցներ, անմիտ, հրէշաւոր բաներ հնարեցէք փայլել տալու, սոսկալիք, չլմեցնող դատարկութիւնը ոսկեգծովու համար—եւ հայ կինը կը գայ ձեր ետեւից։ Սարեցէք թղթախաղի սեղան—ամե- նայն պատրաստականութեամբ նրա շուրջը կը հաւաքվեն հայ կանայք։ Բացէք արամանդներով, ոսկով բեռնաւորվածների ցուցահանդէս—եւ դուք կը պաշարվէք հայ կանանց մի եռանդուն, մրցութեան տենչով հրեհնված մի բազմու- թեամբ...

Չարմանալ այդ ցաւալի, անհարկաւոր առա- տութեան վրա։ Մի մոռանալ, որ այդ բոլոր մարդիկ երէկ, անցեալ օրը սէր էին խաղում, ազատութեան գաղափարը այլանդակում էին հողմարածութեան շաների համար։ Ի՞նչ կը լինի մի աղջիկ, որ չը գիտէ ամենատարրական բա- ները, բայց ինչ-որ բարձր առաքելութեան տ- նունով՝ բարձրից հայեացքներ է պտտեցնում յիմար, անմիտ գուարճութիւններ գտնելու հա- մար։ Ի՞նչ կը լինի մարդկային մի արարած, որի ամբողջ հասկացողութիւնն է, թէ չը պէտք է տանը նստել, պարագել, զարգանալ, օգտակար մարդ դառնալ, այլ պէտք է միայն ձանձրոյթ չը գրաւ, ուրախ լինել, սիրահարական երեսա- յով թերեւեռով ժամանակ սպանել, մինչեւ մի այնպիսի ամուսին ձարելը, որ սեփական ձիա- ներ եւ արտասանման կազ կարախօսով զար- դարված սենականներ կը տայ նրան։ Ի՞նչ սպա- սելիք ունիք այսպիսի սերունդից։

Ողբալի իրականութիւն։ Եւ դուք չը գիտէք թէ ինչի վրա աւելի արտասուէք թափէք։ Ար- դեք սիրոյ յաւիտեան սուրբ ու վեհ զգաց- մունքի այդ աստիճանի ստորացման վրա, թէ այն սերունդի վրա, որ պիտի առաջ գայ այդ տեսակ ծնողներից։ Երկուսն էլ ինձ համար հա- լաւար չափով զարմուշակ են իրեւ տոնային դժբախտութիւններ, իրեւ անկման, այլապե- ման անաւոր զէնքեր։

Բայց ո՞վ է մեղաւորը, ո՞վ պէտք է դատա- պարտուի։ Ահա ցաւեցնող հարց։ Եւ եթէ թող- նենք երեմիականները ու նայենք այն միջա- վայրին, ուր մեծանում է հայ աղջիկը, մենք հազիւ թէ կարողանանք մեղադրել միայն նրան։ Ո՛հ Այն դժբախտութիւնը, որ ներկայանում է մեր աչքին, մեր ընդհանուր պակասութիւնների արգասիքն է։

Մենք վերցվում ենք, որ հայ աղջիկը այդ- պէս է մեծանում։ Բայց ասացէք, ինչո՞ւ, ու- թիչ ինչ կերպ կարող է նա զարգանալ։ Տեսէք մեր ընտանիքը, մեր հասարակութիւնը։ Ի՞նչ հասկացողութիւններ, ինչ պաշտամունքներ են ամեն օր, ամեն րոպէ տիրում մեր մէջ։ Տգէտ, անպատրաստ ծնողներ ընտանիքի մէջ։ Նրանք իրանք են դնում սկիզբը, ներշնչելով իրանց աղջիկներին, թէ ուրիշ բան հարկաւոր չէ այս աշխարհում, բացի հարուստ ամուսին հարելուց։

գլուխը ինչպէս կարող է։ Նայեցէք այս սուր- բերին, այս մարտիրոսներին, որոնք գալիս են կարծես մի բան ձեռք գցելու տենդոտ փութով եւ իւրաքանչիւրը շաղկապ ընտելում է իր չար- չարանքի գործիքը, որպէս վկայ իր անյողողը հաւատին ու առաքելութեանը։

Այս դատապարտութիւնները, որոնք զարկում են կծիկ-կծիկ եւ իրանց ջղաձգական շարժում- ների եւ ցնցումների մէջ կարծես կորց- բել են մարմինների ֆիզիկական օրէնքների բոլոր հաւասարակշռութիւնը, ուսման չանգում են երեմիները, կամ զարհուրելի պտոյններով գործում են չը գիտես ո՞ր, կան որ օձերի պէս խառնվել են իրաւ եւ ներկայացնում են գալարված ձեռքերի, ոտների, պարանոցների մի անաւոր զանգուած, մի հրէշ, որի զանազան կողմերից չափ աչքերի մէջ երեւում է անհա- րին սարսափ մեծութիւնը։ Ուսման իրար են քաջընում, ինչպէս լայնարձակ ծովում նախ խորտակումից յետոյ մի հատիկ մակույկի վրա փրկութիւն որոնողների մի խելագար բազմու- թիւն։ Երկու կողմից իրար վրա կուտակված ձեռքերը ցաւով մեկնած, աչքերն աղբւրդող, երկիւղը, սարսափը, ոչնչութիւնը, գերագոյն ոչնչութիւնը զէմքերին, նայում են կենտրո- նում կանգնած Գրիգորի, ծայրագոյն դատա- ւորին։ Նայում են նրա չրթուների շարժումնե- րին, սպասում են նրա ժեստին։ Եւ այդ դա- տաւորը սպառնալի է եւ ու արդար, զեղեցիկ է եւ անաւոր, նրա աջ ձեռքի շարժումը, որ աչքնան չեչտ ու թափ ունի իր մէջ՝ սասանե- ցուցիչ է։ Տիեզերքի համար վրէժնորդութեան

Այնուհետեւ վերցրէք ընտանիքից դուրս գտնվող աշխարհը։ Ո՛ւր եւ ինչպէս կարող է գտնել հայ աղջիկը բարձր գաղափարներ, Հա- սարակութիւնը խաւար ու տգէտ, կնոջ մասին ունի հին բարբարոսական հասկացողութիւններ, նրա համար կինը ուրիշ բան չէ կարող լինել, բայց եթէ մի սիրուն առարկայ, որը պէտք է աշխատել ձեռք գցել՝ վայելելու համար։ Ուրիշ տեսակ դատողութիւն, ուրիշ հայեացք չը կայ։ Հէնց այն հանգամանքը, որ այժմ աղջիկը քինդ փակված չէ տանը, ինչպէս մի 50—60 տարի առաջ, որպիսի առատութեամբ բամբասանքներ է ստեղծում Հայ աղջիկը կատարելագոյն ընկղմված է բամբասանքների, խորհրդաւոր չը- շուկների ծովի մէջ։ Նրա իւրաքանչիւր քայլը, իւրաքանչիւր շարժումը իսկոյն բացատրվում է տանեականների, հարկաւորների կողմից եւ բացատրվում է անպատճառ ասիական-հարեմա- կան իմաստով։ Եւ աղջկայ ակննդին շարունակ այդ շղթաները, այդ բացատրութիւններն են հասնում։ Ի՞նչ դատարարական կարող է նա ստանալ։ Նրան բարոյականութեան դասեր են տալիս զգուշի բամբասանքների միջոցով։ Եւ ուղիք են բարոյականութեան դաստաու- ները...

Գաղափարականութիւն զեղեցիկ սեռի մէջ։ Սա, այդ, հրաշալի բան է։ Բայց որտեղից պի- տի ընկնէ այդ գաղափարականութիւնը։ Կայ գաղափարականութիւն հասարակութեան մէջ, եւ երբեք անտարբերութիւն, որի իշխումը փրկու- չը լինի, կայ մեր իրականութեան մէջ կանո- նաւոր կրթվելու, առաջ գնալու, կատարելա- գործվելու հնարաւորութիւն։

Ո՛հ, մենք աւելի լաւ վիճակ պահանջելու ի- րաւունք ունենք։ Սա գուցէ շատ խիստ, շատ անողորմ վճիռ է, բայց դուք ոչինչ չէք կա- րող անել նրա դէմ։ Մեր համարաբանական երկրասարդը մակերի միջոցով հարուստ հարս- նեցուտ որոնէ եւ մեր թերուս աղջիկը սէրը սպօրտ չը դարձնէ։ Սա անկարելի է։ Բարձրա- գոյն ուսման վկայականով զարդարված մէջ- քից չորս անգամ ծալվի տգէտ, բայց շատ հա- րուստ «խաղէիկ» առաջ, յանձն առնէ նրա համար դժբախտներին հարստանալը, գորու- թիւն անելը, եւ մեր թերուս անպատրաստ օրորողները ուրիշ հասկացողութիւն ունենան կեանք վայելելու մասին։ Այդ անկարելի է։ Մեր ինտելիգենցիան գիշերներ լուսացնէ թղթա- խաղի վրա, ոչինչ չը կարգայ, անասնական ստամոքսապաշտութիւնը սրբութիւն սրբոց դարձնէ, եւ մեր թերուս աղջիկը դրախտ ստեղծ է մեղանում։ Դա յիմար երազ է։ Մեր ժողովուրդը կնոջ մասին հարեմական հասկա- ցողութիւն ունեցող մի ամբողջ լինի, եւ նրա մէջ մեծացող աղջիկը, առանց պատրաստու- թեան, առանց մտաւոր պաշարի, կարողանայ ցոյց տալ, թէ ինչը մարդ է եւ ոչ հարեմական իր։ Դա ցնորք է...

Մենք ինքներս ենք պատրաստում թերուս կանանց, նրանց խոստովանութիւնները մի ան- ծանօթ կերպից բերած իրականութիւն չեն, այլ մեր ձեռքով ստեղծած, մեր ընտանեկան—հա-

օրը եւ «կատարածից» յետոյ յայտնվող մի դատա- ւոր աւելի անաւոր եւ աւելի աստուածային լինել չէի կարողը։

Թարութիւն առանցքեր թիւ չունեն։ Եւ դեռ գալիս են, գալիս են։ Չը գիտես ինչ մի գեր- բնական գաղտնիք է ունեցել հանձարեղ նկար- չի վրձինը, որ այս փոքրիկ տարածութեանը կարողացել է տալ անհուն պատկեր։ Մարդ- կային երեւակայութիւնը չէ կարողանում կանգ առնել այս նկարի եզրերին եւ հոգին ակամայ օլանում է հեռու, թափանցում է անհունի խորքերը, որտեղից անասելի թափով դուրս են վիժվում այս մարմինները՝ երբեք վերջ չառնե- լու համար։ Մարդ որպիսի երկար է նայում, պատկերն այնքան ձգվում, երկարանում է եւ բազմութիւնն այնքան մեծանում, երեւոյթներն աւելի բազմազան են դառնում։ Եւ երկու կող- մի անդունդներից դուրս սողողները սղովում են իրար վրա, ձգվում են դէպի դատաւորը՝ հազարգլիների հրէշի պէս, իրար թիկունքի, ուսի, պարանոցի վրա բարձրացած, իրար կոխ- կռուելով, քաշկռուելով՝ բերում են իրանց մեղ- քերի ծանրութեան ու առաքելութեան նշան- ները, փրկութիւն կամ ներողամտութիւն գրա- նելու յոյսով։ Բոլոր այս շարժումների, գալա- ընումների, ցնցումների մէջ եւ ինչ էլ բնա- կան ու խաղաղ, ոչ մէկը, որ անասելի սար- սափ, յոյզ, յոյս կամ կիրք չարտայայտէ։

Ո՞ր զգեստում, ո՞ր իշխանական պալատում է տեսել Անջելոս մի զոյգ թշուառներ, որոնք ո- չնչացած ու անգոր նայում են իրանց խոտա- սիրտ տիրոջ շրթունքներին, սպասելով կեանք

մայնական կարգերի, աշխարհայեցողութիւննե- րի, ձգտումների արգասիքը։

Վարդ չէ բուսնում այնտեղ, ուր փուշ են ցանում։

Եւ թող մեր սեփական ջանքերով բուսցրած, մեծացրած փշերը ծուռտեն մեր սիրտը, կեղե- քեն մեր հոգին ու միտքը։

Մենք զրան արժանի ենք...

Լ.

Մ Ա Տ Ե Ն Լ Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Fr. Nauman: „Asia“, Berlin. Verlag der „Hilfe“ 166 S. Յր. Նստման „Ասիա“, Բերլին, „Hilfe“ շարժաթերթի շրտ. 166 էր.

Ով որ հետեւել է գերմանական պարբերա- կան մամուլին, նա անշուշտ կը յիշէ, թէ 1898 թ. ինչպիսի տաք բանակու սկսվեց կրօնա- կան եւ կիսակրօնական թերթերում պատու- Նաումանի՝ Կ. Պօլսից գրած թղթակցութեան առիթով։

Դեռ թարմ էին հայկական կոտորածների հետքերը, կատարված չարիքը դեռ սարսափ էր ազդում եւրօպական հասարակութեան վրա.— ահա հէնց այդ ժամանակ Կ. Պօլսից լսվեց մի ձայն, որ գալիս էր աւետելու գերմանացիներին, թէ թիւրքերը միանգամայն անմեղ են, թէ նրանք միայն ծայրահեղ կարիքից ստիպված են կոտորել հայերին...

Դա ճանապարհորդ Ծ. Նաումանի տխրահե- լան թղթակցութիւնն էր, որի հիմքը մի գեր- մանացի արհեստագործի կարծիքն էր կազմում եւ որ իր արժանի գնահատութիւնն ստացաւ գործին տեղեկ հրապարակախօսների կողմից։

Ահա այդ մի եւ նոյն Նաումանն է, որ իր ճանապարհորդական բոլոր տպաւորութիւնները հաւաքած լոյս է հնծայել երկրորդ հրատարա- կութեամբ «Ասիա» խորագրով։

Նա այցելել է Պօլս, Բալթիկ, Դանաբուրգ, Նաւարթ, Երուսաղէմ, Գահիրէ եւ այլն, ուս- տի նկարագրութիւնն էլ այդ ուղեգրի շուրջն է պտտվում։ Գիրքը գրված է կենդանի ու ա- հուն ոճով եւ զարդարված է բազմաթիւ ձե- ռանկար պատկերներով։

Շօշափած բոլոր քննելու համար հե- ղինալի ունեցել է միայն մի տեսակէտ՝ գեր- մանական շաներն ու նպատակները, հէնց այդ պատճառով էլ նրա հետաքրքրաշարժ գրութիւնը տեղ-տեղ աչքի է ընկնում թունդ չօլինիստա- կան կոտորածից։

Նա չէ մոռացել կրկնելու գերմանացի արհես- տագործ լսած կարծիքը հայերի մասին «Թիւր- քեր իրաւունք ունենին հայերին կոտորելու, աւել է այդ արհեստագործը, որովհետեւ ուրիշ ոչնչով չէին կարող պաշտպանվել նրանց խաղե- բայութեան ու խաղախոսութեան դէմ... Հայը աշխարհիս ամենավատ արարածն է... Նա ծա- խում է իր կնոյն, իր անչափահաս աղջկան, իր հարազատ եղբորը՝ Ամբողջ Կ. Պօլսի կեղտոտված է հայերի ստոր բարոյականու- թեամբ... Դա մի անգլիական ստալուստութիւն է, երբ ասում են, թէ Անատոլիայի հայերը

կամ մահ։ Այդ է, որ նա պատկերացրել է Գը- րիստոսի ոտների ներքեւ կծկված այս երկու թշուառականների դիրքի մէջ, որոնք կարծես սարսափով սպասում են իրանց գլխին ժայթող փոթորիկին։ Սպասողական կացութեան յոյզը, հոգեկան խեղդող անհանգստութիւնը գուցէ երբեք աւելի տրագիկական, աւելի սպանիչ չէ եղել։

Վերջնականագոյն դատապարտվածներ կան, որոնք բուսնացնելով, թափելով, բազումներով ծածկում են երեսները իրանց ոտների տակ՝ բացված անդունդ չը տեսնելու համար. կան որոնք գլուխները թաղել են երկու ծնկների մէջ եւ ներկայացնում են մի անորոշ կոյտ, որ սարսափի եւ ոչնչութեան պատկերն ունի. կան որ երեսի վրա են ընկել եւ տրորվում են տեղնուտեղ՝ ասես եղունգներով փոս են չանգում երկրորդ անգամ թաղվելու։ Ամբողջ պատկերը ներկայացնում է մի աւերիչ մրրկի, որ իր ոլորտների մէջ անազին թափով չը գե- տես արտեղից խլում է մերկ ու գալա- րուն միսերի ամբողջ կոյտեր եւ չարտում է անգունները՝ ոլորելով նրանց հազար ու մի ձեւերով։

Ամենից վար Ախերոնն է կամ Ցաւերի գետը, որի վրա չողում է Գարօնի նաւակը, որ մի ամբիջ գէպի անդառնալին եւ յաւիտեական սարսափի է տեղափոխում անցաւոր աշխար- հում ժամանակաւոր մեղքերի մէջ թաթախ- ված մի անգիտակից մարդկութիւն։ Դժոխքի դուռն է այս, այնպէս՝ ինչպէս այն պատկե- րացրել է Դանտեն իր դժոխքի III երգի սկզբ-

աւելի լաւ են... Այստեղ էլ հայերը ճնշում ամենքին իրանց վախառութեամբ... Ոչ մի քիչ չը կայ հայերից պաշտպանվելու հա- թիւրքերի արածը ինքնապաշտպանութիւն է։ Պ. Նաուման, առաջ բերելով այդ կարծիքը, վրա չէ վերցնում պատասխանատուութիւնը իրանց անապահովութեան, որ ուրիշ գերմանացի էլ համաձայն են եղել զրա հետ։ Իսկ չը գերմանացիք առտ չէին ասի (sic!)...

Դրանից յետոյ մի քանի տասնեակ երեւո- լում նկարագրելով իր ճանապարհորդութիւնը հեղինակը նորից վերադառնում է հայկա- դէպերին եւ պապացանել աշխատում, Հայաստանին անկախութիւն չէ կարելի որովհետեւ դա Թիւրքիայի համար մահ կա- ջացնէր, իսկ այդ մահը բոլորովին ցանկալի գերմանական շաների տեսակէտից։

Երկրում բարենորոգումներ մտցնել էլ չէ- լի, որովհետեւ—բարենորոգումները ամեն- վտանգաւոր խօսքն է Թիւրքիայում... Բիւ- Նուրպան ամեն անգամ իր հիւանդին մտնու- լիս «բարենորոգումներ» է առաջարկում, կայն հիւանդն զգում է, որ նա այդ դեղն ընդ- նել չէ կարող։ Նա միշտ պատասխանում է «Ի հարկէ, պարոն բժիշկ»։ Բայց առաջարկ- կաթիլները Բօսֆօրի ալիքներին է խառնում։ Ուրեմն ինչ պէտք է եղրակայնել պ. Նա- մանի այդ գիտողութիւններից։ Այն, որ մանական շաների տեսակէտից հարկա- թողնել, որ թիւրքերը կոտորեն, ոչնչացնեն յերին։

Շատ մարդասէր կարծիք է, չէ, ընթերց- Այն, մարդասէր է եւ դժբաղդաբար մինչեւ- աշխարհի մարդասիրութեան է հետեւել գեր- նական ըաղաքականութիւնը։

Ե. Թ.

Նոր ստացված գրքեր. 1) „Poèmes Arme- niens anciens et modernes“, traduits par A. Tchobanian et précédés d'un étude de Gabriel Mourey sur la poésie et l'art arméniens. Paris, 104 էրես, 2 ֆրանկ. 2) Советъ Съезда нефтяной промышленности „Обзоръ Вакинской нефтяной промышленности“ 1901 года. Три части. Баку, 1902. Գինը 5 րոպ. 3) Ս. Ս.—Երեւանական Զրոյցներ, № 1 Յառաջա- բազու, 1902, գինը 20 կոպէկ. 4) „Հայի Սանկա- տիւրոնդի հայոց կեղեցական գործերի կառավար- թեան խորհրդի“ 1901 տարվան։ Վեներուրդ, 1902

ՆԱՄԱԿ ԱՍԽԱՐԱԴԻԾ

Ծուլիսի 29-ին

Տեղիս «Աղբատախան» հոգաբարձութեան մասին խօսեցին, գրեցին ու լաւ ինչ Կար- ընկերութեան գանձապահն ոչ չուսմ է, ոչ կա- դում։

Պահանջում ենք հայիւ մասնաւոր շրջանու- որոշվում է յանձնել հաշիւները երկ- պարոնների։ Անցան ամիսներ, այդ պարոնների ոչ մի լուր։

Չը գիտենք ո՞վ պարտականութիւնն է վեր- ջապէս այդ հայիւ ներկայացնելը։ Գանձապա- ոչ մի գործի (ոչ փող հաւաքելու եւ ոչ էլ այլ քատներին փող բաժանելու) մէջ չէ խառնվում։

Բում։

«Աղետաւոր քաղաքն ինձանից են անցնում» Ե՛րէյ յաւիտեանական ցաւերն ինձանից են անցնում։

Ե՛րէյ դատապարտված հոգեկներն ինձանից են անցնում։

Այս խօսքերը Դանտեն գրված տեսաւ, դրան վրա, ներս մտաւ։ Վերջիվերջի հետ ախ, ինչ որ նա տեսաւ գոթիքի ներսում, ի տարիապէս համապատասխանում է Անջելո «Վերջին դատաստանին»։ Այնտեղ հառաչան- ողը ու ձիւք բարձրացող թիւղում էին ասես զագուրկ օդի մէջ... Կերպ կերպ լեզուներ թատնելի բարբառներ, վշտի մրմուռները եւ կատարելութեան սուր չեչուր, բարձր ու կր- կերվող ձայներ, ձեռքերի շառաչներ այնպիսի աղմուկ էին հանում մշտագիշեր ու խառ- այն օդի պտոյանների մէջ, ինչպէս աւազը եր- մրկում է փոթորիկը... Եւ յետոյ մի գո- չը գալիս այնքան երկար, որ եւ դժուարանալ էի հաւատալ, թէ մահը երբ է այդքան լաւ լինի... Եկայ հասոյ այնտեղ, ուր դադարում է ամեն լոյս, որ մոնչում է մրկող ծովի ման, երբ ծծվում է հակառակորդ հողմերը։ Միքէլ-Անջելո «Վերջին դատաստանը» տէի դժոխքի մի պատկերն է կարծես եւ ամեն անհասկանալի է։ Դանտեն Անջելոն երկուորեակներ են, երկու հակա- ընկալութիւն, մէկը գրեթէ եւ միւսը վրէժնով։

Ա. Ահարոնյան

*) Դանտե՝ Դժոխք երգ. III և V.

հարկաւորութեան և գանձապահութեան, չէ
որ քան էլ ունի իր որոշ ձեւը: Պէտք է կանխել
հետաքրքրելով անձանց, ներկայացնել
հարկաւորութեան և հարկաւորութեան իր հրաժա-
րանքը թէ՛ ոչ, խոստովանել երեքսայի պէս, չանել
որոշ միայն ասել: Եւ ինչ գործ ունենա, եւ
տեսակները յանձնել եւ: Չենք արդարացում
անհրաժեշտ անտարբերութիւնը: Նրանք
պարզ պ. գանձապահի սահմանութիւնը դէպի
տեսակներ, իրանք գտնել թէ՛ արեւելքին իրանց
անհատութիւններին եւ յայտնեն
թանկութեան արդիւնքը:
Պարտաւորութիւն է այդ աստիճան անտարբե-
րութիւնը:
Ազատները քաղցած են, հաց են պահան-
ջում: Իսկ դուք, պարոններ, չէք իմանում այդ,
որովհետեւ դուք կուշտ էք: Մտե՛ք մի րօպէ
այն քաղցած զուրթիւնը, որին ընկերութիւնը
արդիւնք է փողոցները չըջել եւ մուրալ, մի
եւ նոյն ժամանակ էլ հաց չէ տալիս նրան ու-
սուցում: Ժողովուրդը չէ տալիս իր ամսավարը,
որովհետեւ հաշիւ չէ ստանում իր նախկին
հարստութեան: ***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Լուսանակ, յուլիսի 22-ին

Միայն այս տարւոյ, 187-րդ համարում
լուսանակից հաղորդված այն լուրը, թէ յուլիսի
7-ին Նոր-Նախիջեւանի մի հայ քահանայի աղ-
ջիկ լուսանակում, իր քրոջ աղջկայ հետ փա-
խան անապատացան մի հրէայի հետ եւ ապա թէ
երեքն էլ ձերբակալվեցին, ցաւօք սրտի՛ դառն
հիշատակութիւն է:
Իր լուսն այդ տեղեկութեան թոյլ տուէ՛ք
յայտնել: որ աղջիկներից առաջինը, քահանայի
դուստրը, յանձնված է օր տեսչութեանը իսխ-
ուտ քաղաքում: Իսկ երկրորդը, իմ ծխական-
ներից այն օրիորդը, որին հայրը եւ խորթ
այրը տարել էին Նոր-Նախիջեւան եւ ընդի-
նարով նշանաւորուել, եւ որից ստիպված
օրիորդ կորստանա էր դիմել, այժմ առնված է
նոյններից եւ յանձնված մեծ քրոջ խնամքին
լուսանակում: Օրիորդը յանձնել, իրան մի ամս-
այ ապաշխարանքի տեղական հայ աղօթատան
էլի:

Քահ. Հերթեցեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կարա-Մուրադայի աշխատութիւնների հրատա-
րակութեան օգտին ստացվել կերպից, Միհրան
Կարապետի, 4 ռուբլի 50 կօպէկ. Գերբեգիցի,
տեղական ոստիկանապետի միջոցով, 49 ռուբլի
78 կօպէկ, որ գոյացել է սիրողների մի ներ-
կայացումից, ընդամենը 54 ռուբլի 28 կօպէկ,
իսկ նախկին ստացածների հետ միասին—1337
ռուբլի 8 կօպէկ:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են,
որ գերմանական յայտնի գործարանատէր, «Թըն-
շաւթայի» թաղաւոր» կրօնապա մտադրութիւն
ունի հիմնել Ռուսաստանում մետաղուղիական
ու մեծ գործարան՝ նման այն ընդարձակ գոր-
ծարանին, որ ունի Գերմանիայում:

Պետերբուրգի կանանց պաշտպանութեան
ուսումնական ընկերութիւնը որոշել է, որպէս
փորձ, նշանակել թաղային հոգաբարձուներ եւ
նրանց օգնականներ, որպէս զի նրանք ընդու-
րեւելի կատարեն այն դէպքերում, երբ աղ-
ջիկներ եւ կանանց բարոյականութեանը վտանգ
է սպառնում: Պետերբուրգ այս նպատակով
կը բաժանվի քաղաքատեսերի եւ իւրաքանչիւր
քաղաքատես կունենայ իր առանձին հոգաբար-
ձու, որի օգնականները պարտաւոր կը լինեն
չղի արհեստանոցները, գործարանները, ծնը-
նաբերութեան ապաստարանները եւ այլն: Նրանք
կունենան իրանց ձեռնուրձ բաց հրամաններ,
որոնցով հնարաւորութիւն կունենան կարեւոր
դէպքերում դիմելու իշխանութիւններին աջակ-
ցութեան:

Վարդան հանքային ջրի գործածութեան
չղի արհեստանոցներ ընդլայնվում են. նա
այժմ գործածական է դարձել ոչ միայն Կովկա-
սում եւ Ռուսաստանում, այլ եւ հեռավոր Սի-
բիրիայում, ուր մօտ ժամանակներում բացվել
է այդ ջրի վաճառման գործակալութիւն: Բացի
այսից Վարդանի արտադրանքներն համար,
իսկ նա հաղորդում են լրագիրները, բացվում է
տե՛ս եւ պարսկական շուկան:

Թիֆլիսի քաղաքային գումարի քարտուղար
Չեքոնիկ կազմել եւ ներկայացրել է ուղար-
կելու այն կանոններն ու հրահանգը, որոնց
համաձայն պէտք է տեղի ունենան գումարի
ձեռնարկների ընտրութիւնները 1902—1906

քաղաքային համար: Քաղաքային ուղարկման,
ընտրելով այդ կանոններն եւ հրահանգը, որոնց
հաստատել նրանց եւ դուրսի ձայնաւորների
ընտրութիւնները նշանակել հետեւեալ օրերը,—
ընտրողական առաջին շրջանի համար՝ սեպտեմ-
բերի 22-ին, երկրորդ շրջանի համար՝ սեպտեմ-
բերի 26-ին, իսկ երրորդ շրջանի համար՝ սեպ-
տեմբերի 29-ին:

Հաղորդակցութեան ճանապարհների միջնատ-
րի կարգադրութեամբ որոշված է հարաւարեւ-
մտեան երկաթուղիների վրա ացետիլէնի լու-
սաւորութեան փորձեր անել: Եթէ այդ փոր-
ձերը բաւարար լինեն՝ ացետիլէնի գազի լուսա-
ւորութիւնը կը մտնուի պետական բոլոր եր-
կաթուղիների գծերի վրա:

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑԻՑ մեզ գրում են. «Երէկ,
օգոստոսի 1-ին, երեկոյան ժամը 7-ին, մեր
քաղաքում կարկուտ եկաւ ընկուղի մեծութեամբ
հիւսիս-արեւմտեան ուղղութեամբ եւ 10 րո-
պէսում ունչացրեց բանջարանոցները՝ փշրելով
բազմաթիւ տները եւ խանութները լուսամուտ-
ների ապակիները: Վնասը մեծ է: Բարեբաղդա-
բար մեր դաշտերի արտերը քաղված էին»:

ՂՈՒԲԱՍԵԻՑ մեզ գրում են. «Լուսայի խնձո-
րը այժմ ուղարկվում է վազմաներով Բօստով
Դօնի վրա եւ այլ տեղեր: Մրգեղէն շատ ու-
նենք այս տարի: Վերջին երկու շաբաթվայ
ընթացքում այստեղ անձրեւ. եկաւ. այդ համ-
գամանքը, այդպիսիների կարծիքով, օգտաւէտ
է թէ պտղեղէնի խոշորանալու եւ թէ աւելի
համեղանալու եւ հասունանալու տեսակետից»:

ԱՍԽԱՔԱՆԴԻՑ մեզ գրում են. «Ժամանակով
տեղիս ուսումնարանին կից եղել է գրադարան,
չնորհիւ ինչպատուր քահանայ Փանենցի հան-
գանակվել է ժողովրդից մօտ 500 ր. փող եւ
այդ փողով գրքեր են ստացվել: Փակվելով ու-
սումնարանը, վերջացրեց իր գոյութիւնը գրա-
դարանը նոյնպէս: Գնաց այստեղից իր նոր
պաշտօնավայրը՝ Ղուբա հայր Փանենցը, իսկ
նոր մնացին գրքերը, յայտնի չէ: Հինգ հարիւր
րուբլի արժեքով գրքերից մնացել են մօտ 100
հատ փղերիկ հասարակ գրքային, իսկ մնա-
ցածը չը կայ: Ձի բարեհաճի արդեօք հայր Փա-
նենցը յայտնել, ո՞ւմ են յանձնված այդ գրք-
երը, ինչ ցուցակով եւ ուր է ցուցակը: Այդ
մասին այստեղ ոչ ոք չը գիտէ եւ բոլորը միա-
ձայն ասում են, որ այդ գիտէ միայն տէր-
հայրը: Յուսով ենք, որ չի մերժի տէր հայրը
պատասխանել մեզ լրագրի միջոցով»:

Ջիվանչիի գաւառի ՄԱՆԱՎՈՒՉ գիւղից մեզ
գրում են. «Նախորդ մի քանի տարիները մեր
գիւղերում անբերրութիւն էր տիրում. նախ-
անցեալ տարին երկարատեւ անձրեւները եւ
ժանգը փչացրին մեր արտերը. իսկ անցեալ
տարին երկու անգամ կարկուտեւ աւերեց: Այդ
երկու տարում տարւոր ժամանակները նոյնպէս
մեծ աւերածութիւններ գործեց, այնպէս որ մեր
գիւղացիք խիստ նեղութեան մէջ էին. բայց
այս տարի թէ հաջի բերքը եւ թէ խոտը մեր
գաւառում աւառտ են: Դժբաղդաբար, մեր մի
քանի գիւղերում՝ սերմացու չունենալու պատ-
ճառով՝ քիչ են ցանած եղել: Կորեկի արտերը
անաղղոկ են երաշտի պատճառով: Պատուը չը
կայ, վաղահաս ծառապտուղը մեծ մասամբ
ցրտատար է եղել գարնանը. օակայն խաղողից
բաւարար բերք է սպասվում, եթէ որ եւ է
պատահար չը վնասէ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Post» լրագրին գրում են Կ. Պոլսից, թէ
արաբական սիրուտ ցեղի շէյխը հրատարակել է
մի «Ֆէթվա», որով հրամայում է մահովան
պատժի երթարկել ամեն մի հայի, որ 1895—
1896 թվականների կոտորածի ժամանակ մահ-
մէջականութիւն ընդունելուց յետոյ՝ այժմ կը
յանդգնի թողնել իր նոր կոծնը եւ վերադառնալ
քրիստոնէայ եկեղեցու գիրկը:

Իտալական մամուլը սաստիկ դանգաժում
է այն բանից, որ Շվեյցարիայի ընդհարումը ի-
տալիայի հետ վերջացաւ ոչ պատուաւոր կեր-
պով իտալիայի համար: Իտալական կառավա-
րութիւնը չը ստացաւ ոչ բաւարարութիւն, ոչ
հանգստացողիչ խոստումներ ապագայի վերա-
բերմամբ, ուրեմն իտալիան իսկապէս կրել է
դիպլոմատական պարտութիւն: «Pol. Cor.» ա-
ռարկում է իտալական մամուլի այս դանգաժման
դէմ, թէ շվեյցարական կառավարութիւնը պար-
տաւորվել է բոլոր դէպքերում, երբ անխիտ-
նականները թոյլ կը տան իրանց յարձակումներ
գործել իտալիայի կամ իտալական ազգայական

տան վրա, գործ դնել ամենախիստ միջոցներ,
որքան այդ միջոցները թոյլատրելի են համար-
վում իտալական օրէնքների տեսակետից: Շվեյ-
ցարական լրագիրները, ընդհակառակը, պնդում
են, թէ այդ տեսակ պարտաւորութիւն դաշ-
նակցական խորհուրդը ամենեւեւ յանձն չէ ա-
ռել: Նա միայն ցաւ է յայտնել, որ շվեյցարա-
կան օրէնքը թոյլ չէ տալիս կառավարութեան
հայաճանք յարուցանելու լրագիրների դէմ օ-
տարերկրայ թաղաւորներին վերաւորելու հա-
մար:

«Polit, Corresp.» հաղորդում է, թէ Սօ-
ֆիայի ուսաց եւ աւստրօ-ունգարական ներ-
կայացուցիչները «բարեկամաբար» դարձրին
բոլորական արտաքին գործերի միջնորդ: Դա-
նիլ ուշադրութիւն գրեց իր լուսնի վրա, որ ան-
հրաժեշտ է դադարեցնել յարաբերութիւնները
Բոլորիայի ազգայնականութեան եւ մակնդոնա-
կան յեղափոխական խմբերի միջ, որոնք ըստ
մեծի մասին կազմվում են բոլորահպատակ-
ներից: Թէ Ռուսաստանի եւ թէ աւստրօ-ուն-
գարիայի ներկայացուցիչները մասնացոյց արին
բոլորական զննապետ Շանկովի վրա, որ ան-
ցել է մակնդոնական ապստամբների գլուխ:
Բացի արանց, յիշված ներկայացուցիչները ա-
սացին, որ իրանց կողմից ցանկալի չեն համա-
րում մակնդոնական կոմիտէի նախկին նախագահ
Սարաֆօվի երեւայր Սօֆիայում: Միհրատը Դա-
նիլ խոստացաւ երկու պետութիւնների ներ-
կայացուցիչներին՝ հնար եղածին չափ՝ աչքի ա-
սառաջ ունենալ նրանց «բարեկամական խոր-
հուրդները»:

Բերլինի ոստիկանապետ Վինգէյմ պաշ-
տօնապէս յայտնեց, որ իտալական թագաւորը
կը հասնի Պոզուան օգոստոսի 27-ին (ն. տ.)
եւ հետեւեալ օրը գերմանական կայսրի հետ
միասին կայցելէ Բերլին:

ԽԱՆՆ ԼՈՒՐԵՐ

Մ Ա Ն Բ Ա Ն Կ Ա Ր

Ամարանցի ծառատանի մէջ, ընդարձակ
ստուգում, գցված էր սեղանի վրայ, չորից
եւ քաղաքի փողներից տանված էին բերք, մի
առանձին հաճութիւնով հետեւում էինք տան-
տիրով «համեցներին»: Թամաղան ողբերգի
առաջարկում էր կենսական: Կերպարանով սե-
ղանակիցների շրջանը՝ նա սկսեց խմել հասա-
րակութեան յոյսերի կենսացը: Էլ երիտասար-
դութիւն, էլ մամուլ, էլ գրականութիւն, էլ
հոգեւորականութիւն, էլ ժողովուրդ—ոչինչ չը
մնաց, որ վրիպէր նրա ուշադրութիւնից:

Հիւրերի մէջ կար եւ մի նորաւարտ ու-
սանող հիւսիսից եկած: Նա չար գգացեց
այն բուն ողբերգութիւնից, որով ընդունվում
էին թամաղայի առաջարկած կենսացները:

—Շատ լաւ եմ գտնում եւ ինքս ինձ, չնչաց
նա իմ ականջին, արտաքին է տեսնել այսպի-
սի ողբերգութիւն եւ մտերմութիւն:

—Վարդը է արդեօք, որ Կովկասում չէք ե-
ղել, հետաքրքրեցին եւ:

—Չորս տարի, պատասխանեց նա, զբաղված
էի ուսանողական գործերով եւ չէի կարողա-
նում այցելութիւն անել հայրենիքս: Օտարու-
թիւնից յետոյ եւ մի առանձին ջերմութիւն,
փայփայանք եւ գործանք եմ գտնում այստեղ:

—Հա, մի «թամաղէն» լաւ վարպետ է, մի-
ջամեց մեր միւս հարեւանը, չնուրբով է մար-
թը, ճառ տալին էլ գիտէ, կենսացներ առաջար-
կին էլ:

—Ողբերգիւմ է, նկատեց ուսանողը:

—Էհ, դրա բանը ուրիշն է, վրա բերեց մեր
հարեւանը: Դա խուրը տկիւնէմէն էնէնք բանիւր
դուս կու բերի, վուր իսկի յօտն չըլքը: Օրը
չուրս ջերմ վուր թամաղութիւն անէ, ամեն ան-
գամին էլ նուր-նուր մալաւաթիւնի կու դնէ
ըստ առաջ: Փէշակ է դարձի էդ մարդու համա-
նը էլ էր պիտի մէջաջ:

Այդ գովառանքը ոչ միայն չը գոհացրեց ու-
սանողին, այլ եւ հիասթափեցրեց մի որոշ ա-
տիճանով: Հիւրը տրամադրի էր թամաղայի ա-
սածների մէջ տեսնել մի տեսակ անմիջական
ոգեւորութիւն, զգացված վերաբերմունք դէպի
իր ասածները, իսկ բանից դուրս էր գալիս,
որ փրօն կենսացներ ու ճառեր առելը մշտա-
կան սովորութիւն է եղել թամաղայի համար:

—Ձեմ կարծում, յայտնեց նա, որ ամեն մի
ընկերութեան մէջ էլ թամաղան այնպէս խօսէ,
ինչպէս մեր մէջ:

—Արա ինչ էիք փէքը անում, վրա բերեց
հարեւանը, ամենքին իր գորա կու կառավարի
թէ լաւ խմուղիքի ու քէֆ անուղիքի աստ
էկաւ: Էն վուրտը մեծ թամաղա է. էնէնք բա-
նի կու մօզօնի, վուր մինչի լուս կու նստեց-
նի առանց բեզբեցնելու. էս հանգի փօկուս-
նիկն է:

Այս նոր քաղաքութիւնները աւելի եւս
ծանր տպաւորութիւն գործեցին ուսանող հիւ-
րի վրա եւ նրա տրամադրութիւնը փոքր ինչ
խանգարեց:

—Ես աւելի ուրախ կը լինէի, մրմնաց նա,
որ թամաղան աւելի քիչ վարպետ լինէր եւ
աւելի նուազ ֆօկուսնիկ, իսկ դրա փոխարէն
աւելի արիւնք լինէր, աւելի անկեղծ:

—Էհ, հիմի ու՛ր է նստի նրա սրտումը, նը-
կատեց մեր հարեւանը, ու ինչ մի բանն է
էդ քրքրիւր: Դարդիմանդ մարդ է...:

—Տուգանք, տուգանք գոռաց թամաղան,
այդ ինչ մասնաւոր խօսակցութիւններ են:
—Իս ասում էի, վուր մի թամաղէն դար-

դիմանդ մարդ է, արդարացրեց իրան մեր հա-
րեւանը:

—Որ դարդիմանդ եմ, հրամայեց թամաղան,
դատարկիւր քո բաժակը:

Ուսանողը յանկարծ թափ տուեց գլուխը եւ
հանգստացաւ:

—Ես իմ հարեւանից շատ շնորհակալ եմ,
ասաց նա ինձ. նա իր գովառանքներով ընտրու-
չեց թամաղային եւ ես այժմ գիտեմ, թէ ինչ
տիպի հետ գործ ունենա Բայց ինձ այժմ մտա-
տանջում է մի հարց, մի՞թէ այս մեր սեղանա-
կիցներն էլ նոյնպէս միայն սովորութիւն են չի-
նել իրանց համար կենսացները խմել այնպիսի բա-
ցականութիւններով, ինչպէս այսօր այդ տեղի
ունի: Մի բանիսը այնպիսի ոգեւորութիւն ու
հրճուանք են ցոյց տալիս, որ կարծես սեղա-
նից առաջ նրանք զբաղված են եղել բոլոր ժա-
մանակը սրբազան պարտաւորութիւնների խն-
դիրներով եւ կարծես սեղանից յետոյ պէտք է
չտապեն գործի ձեռնարկելու ընդհանուր օգ-
տին:

Մեր հարեւանը, որ տուգանքը խմելուց յե-
տոյ նորից սկսել էր մեզ ականջ դնել, լսեց
միայն խօսակցութեան վերջը եւ իր պարզ
համարեց իր կողմից պատասխան տալու:

—Ճախե՛ք—պրծնի՛ք, իժում կու տէ՛նի՛նք,
ասաց նա, թէ գուցիս մէ քիչ թուղթ կու
խաղանք, ան նարդի կու չըլծկենի՛նք. թէ չէ
բօժով չայն էլ վատ չէ կակալի ծառի տակին:

—Ես այդ բանի մասին չէի հարցնում, նկա-
տեց ուսանողը:

—Արա:

—Ես հարցնում էի այս մեր սեղանակիցների
մասին, որոնցից շատերին ես չեմ ճանաչում:

—Հա, էդ ուրիշ բան է, ճայու վրիշը ծանօ-
թութիւն արա. լաւ մարդիկ ին, դարդիմանդ
ին, անմիջ տղերք են, էսօր էսքան վուր խօ-
սեցան ու թղաւեցին, էդուր խոնարհ իրանց
գործքերի վրա կու գնան, մինչի մէկ էլ մէ
ուրիշ օր մէ մեծերում պատահին:

Ճախից յետոյ մենք առանձնացանք ուսանողի
հետ:

Մենք խօսեցինք մեր հասարակական գործե-
րի, մեր երիտասարդութեան, մեր գործիչների
մասին:

—Արդեօք կենքերի մէջ էլ նոյնը չէ կրկն-
վում, հարցրեց նա, ինչ որ այսօրայ ճակերոյ-
թին, արդեօք այստեղ էլ միայն սովորութիւն
չէ դարձել խօսելը եւ զանազան տեսչանքներ
յայտնելը:

—Դժբախտաբար, համաճայնիցի ես, շատ
դէպքերում նոյնն է կատարվում եւ կենքերի
մէջ: Թամաղայական վերաբերմունքը բարոնակ-
վում է եւ հացկերոյթից դուրս: Ճախի ժամա-
նակ եղած բարեկամութիւններին ոչ ոք լուրջ
նշանակութիւն չէ տալիս: Այդ բարեկամութե-
ութիւնները այնտեղ ծնվում են, այնտեղ էլ
մեռնում: Բայց արդարեւ ցաւալի է, որ
գործնականութեան մէջ շատ քիչ դէպ-
քերում ենք մենք տեսնում, որ բա-
րեկամութիւնները հանգէս գալին, իբրեւ
լուրջ մտածողութեան արդիւնք եւ լինէին գոր-
ծելու պատրաստակամութեան արտայայտու-
թիւն: Ես արդէն սովոր եմ ճակերոյթների
ճառերին եւ նրանց նշանակութիւն չեմ տալիս:

—Անկասկած, ասաց ուսանողը, ես իրաւունք
չունէի ճախի ճառերից շատ բան սպասելու,
բայց ինձ շուրաքացրեց մարդկանց առանձին ո-
գեւորութիւնը, որ յատուկ է աւելի լուրջ
դէպքերին եւ առիթներին: Սակայն երբ պէտք է
այդ լուրջ առիթներին համապատասխան գործ
կատարվի:

—Դա հարց է:

Վրձին

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԹՈՒՄԱՆ ԳՈՐԾԱՅԱԼՈՒԹԻՒՆԻՑ
2 օգոստոսին

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Այսօր, սերբիական դեսպա-
նատան բնակարանում, մաղթանք կատարվեց
սերբիական թագաւորի ծննդեան տօնի առի-
թով: Մաղթանքին ներկայ էին սլաւոնական
բարեգործական ընկերութեան անդամները:

62—100 Գրքարանի հասցիս թ 302, գրքարանական քանոնիքը թ 112: (հ. 4.)